ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/121

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.08.2018թ. թիվ 01.1/26-3/15441-18 գրությամբ Ֆ/Ա Արման Բալասանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էներգետիկ պաշտպանության նախարարության 21.08.2018թ. թիվ ԴՎԱ/3137 գրության հիման վրա, 23.08.2018թ. նախաձեռնել է Ֆ/Ա Արման Բալասանյանին (այսուհետ նաև՝ Ֆ/Ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.08.2018թ. թիվ ԴՎԱ/3137 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգում գնահատող հանձնաժողովի կողմից Ֆ/Ա Արման Բալասանյանը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: 2018թ. հուլիսի 31-ին Ֆ/Ա Արման Բալասանյանի էլեկտրոնային փոստին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն հրավերով սահմանված ժամկետում Ֆ/Ա Արման Բալասանյանը չի ներկայացրել պահանջվող որակավորման փաստաթղթերը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>Ֆ/Ա Արման Բալասանյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է Ֆ/Ա Արման Բալասանյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.08.2018թ. թիվ 01.1/26-3/15441-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ֆ/Ա-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ֆ/Ա-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինս չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/121 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.08.2018թ. թիվ 01.1/26-3/15441-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ

պաշտպանության նախարարության 21.08.2018թ. թիվ ԴՎԱ/3137 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.07.2018թ. նիստի թիվ 3 և 13.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, Ֆ/Ա Արման Բալասանյանի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կարտոֆիլի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանը՝ Ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

Ֆ/Ա-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 23.07.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրության՝

• 3.1 կետով Հանձնաժողովը որոշել է Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանին ճանաչել Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

• 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

• Հանձնաժողովի 13.09.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը, որի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը մերժել է նրա հայտը 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. ուղեկցող գրությամբ ներկայացնել բանկային երաշխիքի բնօրինակը /եթե կիրառելի է/.

բ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 8.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի որոշմամբ Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանը ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, որից հետո Հանձնաժողովն առաջարկել է վերջինիս «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն պահանջվող փաստաթղթերը Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանի կողմից չեն ներկայացվել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանը Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը չներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է Ֆ/Ա Արման Արթուրի Բալասանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.08.2018թ. թիվ 01.1/26-3/15441-18 գրությամբ Ֆ/Ա Արման Բալասանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Ֆ/Ա Արման Բալասանյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ